| | | |
|---|---|---|
| գրչաց՝ սղոցի՝ թղթոց՝ ի վարձ մաքրութեան ծխնելուզաց և ի պէտս այլոց կարեւոր իրաց . . . . . | 104 | 69 |
| Ի վերանորոգութիւն Դպրոցաց ի Ներքուստ և յարտաքուստ յօդ. 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 185, և 157 . . . . . . | 450 | » |
| Հատուցաւ ի գին 12, հատ աթոռոց ի պէտս Դպրոցաց . | 15 | » |
| Հատուցաւ ի վարձ մաքրութեան արտաքնոցի Օրիորդաց Դպրոցի . . . . . . . . | 10 | » |
| Ծախեցան վասն հիւրնկալութեան բարերար անձանց յաւուր տօնի Սրբոց Վարդանանց զօրավարաց Հայոց . . . | 10 | » |
| Ի գին կոշկաց և հանդերձից յոյժ չքաւոր ուսանողաց . . | 19 | 43 |
| Ի գին դասագրեանց և այլ կարեւոր ուսումնական պիտոյից . | 9 | 30 |
| Ի վարձ ժամագործի Անդրէյովի . . . . . | 5 | 50 |
| Հատուցաւ ի վարձ կազմարարի . . . . . | 17 | » |
| Ի գին Օդահանից ի պէտս Օրիորդաց Դպրոցի . . . | 21 | 25 |
| Ի գին ջրոյ և ի վարձ լուացման Սենեկաց Օրիորդաց Դպրոցի . | 27 | » |
| Հատուցաւ վասն ապահովելոյ ի հրկիզութենէ զտուն Օրիորդաց Դպրոցի . . . . . . | 51 | 56 |
| Վճարեցան հարկագրամք նուիրեալ գետնոյ Լօրդանեանց վասն 1878, 1879, և 1880 ամաց . . . . . | 7 | 72 |
| Հատուցաւ խմբագրութեան Աստրախանաց «Լիստոկ» լրագրի վասն հրատարակելոյ զվաճառումն փայտեայ շինուածոց ի սրահի Օրիորդաց Դպրոցի աճրդախօսութեամբ . . | 10 | 80 |
| Առաքեցաւ ի Նահանգային կառավարութիւնն Աստրախանայ վասն հրատարակելոյ ի Նահանգային լրագրի զվաճառումն փայտեայ շինուածոց ի սրահի Օրիորդաց Դպրոցի . . | 5 | » |
| Գումար | 5·556 | 75 |

Զտարեկան ծախս ի բաց բառնալով ի տարեկան մտից՝ մնան առ 1-ն յունվարի 1881 ամի մի Դրամատոմսակ Աստրախանայ Հասարակական քաղաքային Դրամանոցի գումարաւ 500 րուբլի, և պատրաստ դրամք 1157 րուբլի, ընդ ամենն 1657 րուբլի արծաթի.

---

## Ազգիս Վեհափառ Հայրապետը Յուլիսի 1 ից մինչեւ Սեպտեմբերի 14 բարեհաճեց արձակել հետեւեալ Կոնդակները։

Կոնդակ օրհնութեան և հաստատութեան յանուանս Աւետիս պէկի Մելիք-Հայկազեանց, Աւետիս պէկի Խուդաբեանց, Առաքելի Խաչատրեանց, Ալէքսանի Գափեանց, Բաբապէկի Թուլիպէկեանց և Ներսէսի Տէր

Մկրտչեանց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան Թեմ. Դպրոցի և օրիորդաց դպրոցի Հայոց Շուշուայ քաղաքի. 3 Յուլիսի 1881 ամ. թ. 253.

Կոնդակ յանուն Աղէքսանդր քահանայի Վարդանեան միաբանի սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Նուփլուզի Տփխիսոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ ի կուրծն զխաչ արծաթեայ ոսկեզօծ վասն հաւատարիմ ծառայութեան ի պաշտաման վերատեսչութեան ուխտատեղւոյ սրբոյն Գէորգայ Տաղկեվանից. 6 Յուլիսի 1881 ամ. թ. 254.

Կոնդակ յանուն Գրիգոր Արքեպիսկոպոսի Մուշեղեանց Առաջնորդի Հայոց Աստրախանի, որով հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան Արամեան ուսումնարանի Հայոց Դավրէժ քաղաքի, զպարոնայս Արզումանն Նազարբէկեանց, Աբրահամ Կ. Վարդանեանց, Առաքելն Միքայէլեանց, Սիմէոնն Թումանեանց, Սարգիս Տէր Յովհաննեանց. Խաչատուրն Տէր Զաքարեանց և զՆազարն Գորոյեանց. ի 6 Յուլիսի 1881 ամի, թ. 255.

Կոնդակ յանուն Սիմէոն քահանայի Տ. Խորայէլեանց Շուշուեցւոյ, որով շնորհէ նմա զպաշտօն աւագ քահանայութեան Ագուլեաց Եկեղեցւոյ տեղւոյն. 8 Յուլիսի 1881 ամի, թ. 258.

Կոնդակ օրհնութեան ի պատասխանի գրութեան և յանուն Պետրոս Եպիսկոպոսի Սեբաստիոյ. 10 Յուլիսի 1881 ամ. թ. 259.

Կոնդակ առ Թադէոս Եպիսկոպոսն, որով առաքէ զԿոնդակ օրհնութեան յանուն ժողովրդեան Շամախւոյ. 21 Յուլիսի 1881 ամ. թ. 269.

Կոնդակ օրհնութեան յանուն Հայոց Շամախւոյ առթիւ աւարտման վերաշինութեան սուրբ Աստուածածին Եկեղեցւոյն. 21 Յուլիսի 1881 ամ. թ. 270.

Կոնդակ օրհնութեան յանուն և ի պատասխանի գրութեան Իշխան Նապոլէոնի Ամատունւոյ Տփխիսեցւոյ 21 Յուլիսի 1881 ամի, թ. 271.

Կոնդակ յանուն Մակար Արքեպիսկոպոսի, որով հաստատէ զնոր կանոնադրութիւն Թեմ. դպրանոցին Հայոց Բեսարաբիոյ և Նոր-Նախիջևանի բացելոյ ի Նոր-Նախիջևան քաղաքի, զցուցակ նպաստատու եկեղեցեաց և պատուիրէ հոգորդել քաղաքագլխութեան Նոր-Նախիջևանի յիւր դէմս թէ հոգևոր է կտակն Մասիհ Պապաջանի և պարտէ ուղղել զթերութիւնս ուղղելս ընդդէմ իսկական նպատակի կտակին ևն, 24 Յուլիսի 1881 ամի, թ. 272.

Կոնդակ յանուն Գէորգ քահանայի Պապաջանեանց Ցամաքաբերդցւոյ և պարոնայից Մոյիլի Խօջեան, Պօղոսի Աղամիրեան և Զաքարայ Յովհաննիսեանց Ընդամալցւոց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն Հոգաբարձութեան ի նորահաստատ դպրոցի Հայոց Ընդամալ գիւղ, 19 օգոստ. 1881 ամ. թ. 308.

Կոնդակ յանուն պարոնայից Մովսիսի Տէր Սուքիասեանց, Տիգրանայ Տէր Սահակեանց, Գաբրիէլի Մկրտչեանց, Մարտիրոսի Վարդանեանց և

Աւետիսի Նիկողայոսեանի, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան դպրոցի Հայոց Գեօրան գեղջ Փամբակու գաւառի. 19 Օգոստ. 1881 ամի. Թ. 309.

Կոնդակ յանուն Անդամոց Հոգաբարձութեան Ներսիսեան - Ազգային - Հոգևոր դպրանոցին Հայոց Տփխեաց, որով յայտնէ թէ՝ կարգեալ Պ. Արշակ Նահապետեանցն լիազօր Տեառն Ս. Գէորգեան Ճեմարանի Սրբոյ Էջմիածնի և միանգամայն պատուիրէ նոցա ազատ կացուցանել զնա ի Տեսչական պաշտօնէ յիշեալ Դպրանոցի զՊ. Արշակն Նահապետեանց. 21 Օգոստ. 1881 ամի. Թ. 310.

Կոնդակ յանուն Կարապետ քահանայի Պօյաճեան Ռուսճուկայ, որով ըստ խնդրանաց Թաղական խորհրդոյ Ռուսճուկայ շնորհէ նմա հրաման առ ի կրել ի գլուխ իւր զկամիլաւփկայ անուանեալ գլխարկն վասն զանազան վաստակոց և աշխատութեանց նորին յօգուտ ժողովրդեան և Եկեղեցւոյ 21 Օգոստ. 1881 ամի. Թ. 311.

Կոնդակ օրհնութեան յանուն Թաղական խորհրդոց և համայն ժողովրդեան Ռուսճուկայ որով օրհնէ զնոսա և գովէ և միանգամայն յորդորէ հաստատուն կալ ի միութեան սուրբ կրօնի ևայլն 21 Օգոստ. 1881 ամի Թ. 312.

Կոնդակ յանուն Արշակայ Նահապետեանց, որով կարգէ և հաստատէ զնա ի լիազօր Տեառն Ս. Գէորգեան Ճեմարանի Սրբոյ Էջմիածնի. 1 Սեպտ. 1881 ամի Թ. 331.

Գրութիւն յանուն Նախագահի Հնագիտական ժողովոյ Տփխեաց, որով առաքեալ ի դիմաց իւրոց զբարեշնորհ Խորէն Ծ. վարդապետն Ստեփանէ իբր պատուիրակ յանդամակցութեան ժողովոյն, խնդրէ ներկայացուցանել հետազօտութեան զձեռագիրն Հայկական նշանագրաց և ուղղութեանց ևայլն 4 Սեպտ. 1881 ամի. Թ. 334.

Կոնդակ շնորհակալութեան և օրհնութեան առ Անդրէաս Արքեպիսկոպոսն յարձակելն զնա ի Տեսչական և ի կառավարչական պաշտամանց Ս. Գէորգեան Ճեմարանի Սրբոյ Էջմիածնի. 10 Սեպտ. 1881 ամի. Թ. 352.

Կոնդակ յանուն պ. Պօղոսի Մովսիսեան Ներսէսեանց Շամախեցւոյ սակս բարեջան վաստակոցն յաւարտ ածելոյ զվերանորոգութիւն խախտեալ Աւագ Եկեղեցւոյն Շամախւոյ ևայլն. 14 Սեպտ. 1881 ամի. Թ. 353.

Կոնդակ օրհնութեան առ իշխան Յովսէփ Փարսադանեանց երկայնաբազում Արղութեանց սակս վերաշինելոյ նորա սեպհական արդեամբք իւրովք զխախտեալ տանիս Սանահնոյ վանից ևայլն. 14 Սեպտ. 1881. ամի Թ. 354.

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.

Ֆոսֆորից այրուածի դեղ: Ինչպէս յայտնի է, փոսփորի այրածը իւր հետեւանքներով շատ վտանգաւոր է, Փոսփորից այրածի վէրքը պէտք է ա-